ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2025 թվականի N 139- Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՎՃԱՐՈՎԻ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ, ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասով և 84-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի դրույթներով.

ո ր ո շ ու մ ե մ.

1.Հաստատել՝

1) «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 1 հավելվածի,

2) «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 2 հավելվածի,

3) «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 3 հավելվածի,

4) «Քաջարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային,

արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 4 հավելվածի,

5) «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 5 հավելվածի,

6) «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 6 հավելվածի,

2. Սյունիքի մարզային ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ ապահովել ընկերությունների կողմից վճարովի սկզբունքով տրամադրվող ծառայությունների մատուցումը համաձայն հաստատված գնացուցակի:

2025-03-03 16:25:23 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2025թ. մարտի 03
ք. Կապան